ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
23.05.2023 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ
հասարակական կազմակերպության 2022 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ
1.2 ՀՎՀՀ-ն		02509752
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ Մոսկովյան 3
1.4 Պետական գրանցման համարը		211.171.1059737
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		1993-01-20
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		041288868
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.armnoc.am
1.8 Էլեկտրոնային փոստը		armgymnastic@mail.ru
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
Գագիկ	Վանոյան	Նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
Մարմնամարզության մրցումների կազմակերպումը և անցկացումը		
Բարձրակարգ մարզիկների և նրանց փոխարինողների պատրաստման մեթոդների կատարելագործումը, Օլիմպիական խաղերի, Աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, ինչպես նաև այլ միջազգային մրցումներին կազմակերպության մարզիկների մասնակցության ապահովումը		
Ռեգիոնալ, հանրապետական, արտասահմանյան և միջազգային մարզական կապերի հաստատում և համագործակցում		
Մարմնամարզության մասնագետների որակավորման բարձրացումը		
ՀՀ տարածքում մարմնամարզության զարգացման հեռանկարային կոմպլեքս պլանների և ուսումնական ծրագրերի մշակում և իրականացում		
Կազմակերպության հավաքական թիմերի թեկնածուների պատրաստման ապահովում, հավաքական թիմերի ձևավորում և ուսումնական հավաքների անցկացում, մարզական հերթափոխի պատրաստման օժանդակում,մարզիկների բժշկական հսկողության ապահովում		
Մեթոդական և գործնական օգնություն ու օժանդակություն մարմնամարզության մասնագիտացված և մարզաձևի բաժանմունքներ ունեցող մանկապատանեկան մարզադպրոցներին: Կազմակերպությունը կարող է մասնակցել մարմնամարզության մասնագետների ընտրության և ՀՀ տարածքում նրանց տեղաբաշխման աշխատանքներին		
Խթանիչ և արգելված այլ դեղամիջոցների օգտագործումը կանխելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում		
Մարմնամարզության բնագավառում գիտական, ուսումնա-մեթոդական հետազոտությունների կազմակերպում		
Ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, կազմավորել ֆինանսական ռեսուրսները, որոշել կազմակերպության ներքին կազմակերպական կառուցվածքը, ստորաբաժանումների ցանկը		
Ներկայացնել կազմակերպության և նրա անդամների շահերը, պաշտպանել նրանց իրավունքները		
Կնքել պայմանագրեր իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ		
Ստեղծել տնտեսական ընկերություններ		
Ստեղծել ֆոնդեր, օգտվել վարկերից		
Ստեղծել կազմակերպության խորհրդանիշով պարգևատրման առարկաներ՝ հուշադրոշներ, կրծքանշաններ, հուշադրամներ, պատվոգրեր, դիպլոմներ, ինչպես նաև տարբեր բնույթի փաստաթղթեր, տեղեկանքներ և այլ նյութեր		
Կանոնադրական խնդիրների լուծման նպատակով կազմակերպությունը կարող է իրեն վերապահել ֆունկցիաներ, որոնց կատարումը չի հակասում գործող օրենսդրությանը		
4 Հասարակական կազմակերպության՝		
4.1 Անդամների թիվը		9
4.2 Կամավորների թիվը		

Digitally signed by
RIMA SAROYAN 7502830871
Date: 2023.05.23 15:23:13

5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը	6

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	ՀՀ առաջնությունների և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում	ՀՀ	Ֆեդերացիայի կողմից ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում	Ավարտված
2	ՀՀ հավաքական թիմի մարզիկների ֆունկցիոնալ վիճակի արդյունավետության բարձրացման նպատակով վիտամինիզացիայի և չարգելված սպորտային հավելյալ սննդով ապահովում	ՀՀ	Կարևորագույն մրցումներում բարձր արդյունքներ նվաճելու պահանջները	Ավարտված

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	ՀՀ առաջնությունների և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում	ՀՀ	Ավարտված	Ֆեդերացիայի կողմից ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում	Մարզիկների մասնակցություն տարբեր մարզաձևերի և մրցաշարերի
2	ՀՀ հավաքական թիմի մարզիկների ֆունկցիոնալ վիճակի արդյունավետության բարձրացման նպատակով վիտամինիզացիայի և չարգելված սպորտային հավելյալ սննդով ապահովում	ՀՀ	Ավարտված	Կարևորագույն մարզումներում բարձր արդյունքներ նվաճելու պահանջներ	Աջակցություն մարզիկների սպորտային գործունեության, մրցակցային արդյունավետության բարձրացմանը: Գնահատման չափանիշները ցուցաբերած արդյունքների վերլուծություն նախորդող տարիների արդյունքների և ցուցանիշների համեմատությամբ

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	98,532,900
8.2 Գույքը	
Ընդամենը	0

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	98,532,900	ՀՀ ԿԳՄՄՆ
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	98,532,900	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	98,285,896
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		98,285,896

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	98,285,896
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		98,285,896

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1			
Ընդամենը		0	

Նշումներ

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____6_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիա» ՀԿ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 477-Ն ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

01 հունվարի 2022թ. մինչև 31 դեկտեմբերի 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորի եզրակացություն 1

Հասարակական կազմակերպության 2022թ. գործունեության մասին հաշվետվություն..... 5

Crowe

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությանը և խորհրդին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է ՀՀ ՊԵԿ Նախագահի կողմից 2020թ. մայիսի 27-ի N 477-Ն հրամանով հաստատված «Հասարակական կազմակերպությունների գործունեության» հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 01 հունվարի 2022թ. մինչև 31 դեկտեմբերի 2022թ. ժամանակաշրջանի դրությամբ Ծրագրերի (Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից 2022թ. հունվարի 24-ին կնքված «Ֆինանսական աջակցության գումարների օգտագործման» մասին պայմանագիր թիվ ՍՊՖ17-2022, և 2022թ. հունվարի 25-ին կնքված «Ֆինանսական աջակցության գումարների օգտագործման» մասին պայմանագիր թիվ ՍՊՎ54-2022) ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը որը ներկայացվել է դրամաշնորհային պայմանագրի շրջանակներում:

Մեր կարծիքով՝

- Կից հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը, որոնք ենթարկվել են աուդիտի, տալիս են վերը նշված Ծրագրերի՝ 31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ, դրամական միջոցների վիճակի և վճարված դրամական միջոցների ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքի:
- Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված դրամաշնորհային միջոցները՝ ֆինանսական աջակցությունները օգտագործել է միայն Ծրագրերի նպատակների համար՝ համաձայն Կազմակերպության և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարության միջև կնքված պայմանագրերի, և դրամաշնորհային միջոցներից ստացված գումարները չեն օգտագործվել այլ նպատակների համար:
- Կազմակերպության կողմից պատրաստված ՀՀ ՊԵԿ Նախագահի կողմից 2020թ. մայիսի 27-ի N 477-Ն հրամանով հաստատված «Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը» տալիս է ճշմարիտ և իրական պատկերը:
- Կազմակերպությունը ըստ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ 2022թ. հունվարի 24-ին կնքված «Ֆինանսական աջակցության գումարների օգտագործման» մասին թիվ ՍՊՖ17-2022 պայմանագրի, չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը պետք է վերադարձներ ՀՀ պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 25-ը, սակայն Կազմակերպությունը չծախսված գումարը, որը կազմում էր 247,000 դրամ, վերադարձրել է ՀՀ պետական բյուջե 2023թ.-ի հունվարի 18-ին:

Crowe and Asatryans LLC
"Dom Moskvy" Business Center,
7, Argishti str., 2nd floor,
Yerevan, 0015, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.com
www.asatryans.com

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
"Դոմ Մոսկվի" Բիզնես Կենտրոն,
Արգիշտի փող., 7, 2-րդ հարկ,
ք. Երևան, 0015, ՀՀ
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.com
www.asatryans.com

Crowe

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» հատվածում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՄԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքների լուսաբանում

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններին, որտեղ ներկայացված է հաշվապահական հաշվառման հիմունքը: Ծրագրերի հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են՝ օժանդակելու «Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիա» ՀԿ-ի ղեկավարությանը՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարությանը ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, ծրագրերի հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ծանոթագրություններում նկարագրված հաշվապահական հաշվառման դրակարկղային սկզբունքի, ինչպես նաև վերը նշված պայմանագրերի համապատասխան դրույթների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սահմանված կարգի համաձայն կազմելու և ճշմարիտ ներկայացնելու համար:

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ՀՀ ՊԵԿ Նախագահի կողմից 2020թ. մայիսի 27-ի N 477-Ն հրամանով հաստատված «Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության» պատրաստման համար, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համար, որը ղեկավարության որոշմամբ անհրաժեշտ է ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը հնարավոր դարձնելու համար, որոնք զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ նրանից դրանք առաջացել են խարդախության կամ սխալի հետևանքով, թե ոչ: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ

սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի շրաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք , թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Ալբերտ Ասատրյանն է:

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն-բաժնետեր,
Առաջադրանքի պատասխանատու

23 մայիսի 2023թ.

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 23.05.2023 15:22